ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Ք.Հրազդան

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս ՏՆՕՐԵՆ Գ.Լ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ մյուս կողմից

«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ» ՍՊԸ ի դեմս

/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը

ՏՆՕՐԵՆ Ռ.Տ.ԿՈԾԻՆՅԱՆԻ

/պաշտոն, անուն , ազգանուն /

«Ջերմատնային տնտեսություն»

մասնագիտության ուսանողների պրակտիկան անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը :

1. Ձեռնարկությունը /հաստատությունը , կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան ____տեղ հատկացնել ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխումը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատության , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

1.3 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման :Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր , նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է՝

2.1 ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց մեկ ամիս առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետ համաձայնեցնել պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում /հաստատությունում, կազմակերպությունում /սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության /հաստատության, կազմակերպության/ տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի, հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար :

2.4. Պրակտիկան սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ նամակով ձեռնարկության /հաստատությանը, կազմակերպությանը/ ներկայացնել պրակտիկա անցկացնող ուսանողների ցուցակը :

3 .Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է չորս տարի ժամկետով, սկսած 2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ը :

6 .Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում, երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ ռեկվիզիտները :

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ	«ԳՐԻՆ ՖԵՐՄԵՐ» ՍՊԸ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ	Ք.ԵՐԵՎԱՆ
2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ	ՄԱՆԱՆԴՅԱՆ 33/4
	ԳՈՐԾ. ՀԱՍՑԵ՝
ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ 96	Ք.ՀՐԱԶԴԱՆ ՋՐԱՌԱՏ 999
ՀԵՌ. 060-27-32-32	ՀԵՌ. +37460-500-570
Հ/Հ160254503016	ՀՎՀՀ 01273752
ՏՆՕՐԵՆ_____ Գ. Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՏՆՕՐԵՆ_____ Ռ.Տ.ԿՈԾԻՆՅԱՆ
ՊՐԱԿՏ.ՂԵԿԱՎԱՐ _____Կ. ՍԵՄԻՐՋՅԱՆ	
«28» 11 2019թ	«28» 11 2019թ